Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 9-Ա
«10» սեպտեմբերի 2024թ.

ք.Մասիս

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՑԱԾ ԻՆՔՆԱԲԱՑԱՐԿ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԱՅԱՆԵ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արարատի մարզի Մասիս համայնքի համամասնական ընտրակարգով անցկացված համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրություններին մասնակցած «Քաղաքացիական պայմանագիր» դաշինքի ընտրական ցուցակում ընդգրկված ավագանու անդամի թեկնածու Գայանե Առուստամյանը 2024 թվականի սեպտեմբերի 10-ին թիվ 11 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին ներկայացրել է ինքնաբացարկի մասին դիմում՝ առանց նոտարական վավերացման:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 137-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ «Թեկնածուն քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն, ինչպես նաև քվեարկության օրվանից հետո իրավունք ունի հանելու իր թեկնածությունը: Կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված քաղաքացու անունը, ազգանունը ցուցակից հանվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով: Թեկնածուի ինքնաբացարկի մասին դիմումը վավերացվում է նոտարական կարգով, կամ թեկնածուն ինքնաբացարկի մասին իր դիմումը հաստատում է ընտրական հանձնաժողովի նիստում: Նոտարական կարգով վավերացված՝ ինքնաբացարկի մասին դիմումը սույն հոդվածի իմաստով համարվում է վավեր, եթե այն ընտրական հանձնաժողով է ներկայացվում վավերացվելուց հետո՝ առավելագույնը եռօրյա ժամկետում:»:

Թիվ 11 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 10.09.2024թ. նիստին ներկայացել է Թերեզա Եփրեմյանը և հաստատել ինքնաբացարկի մասին իր դիմումը:

Ընտրական օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

«Ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի գրանցումն ընտրական հանձնաժողովի որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվում, եթե նա ներկայացրել է դիմում ինքնաբացարկի մասին:

Ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի գրանցումն ուժը կորցրած ճանաչվելու դեպքում թեկնածուի անունը հանվում է ցուցակից՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով:»:

Վերոգրյալը հիմք ընդունելով և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասով՝ թիվ 11 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Ուժը կորցրած ճանաչել Արարատի մարզի Մասիս համայնքի համամասնական ընտրակարգով անցկացված համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրություններին մասնակցած «Քաղաքացիական պայմանագիր» դաշինքի ընտրական ցուցակում ընդգրկված ավագանու անդամի թեկնածու Գայանե Առուստամյանի գրանցումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակվելու պահից:

Թիվ 11 ԸՐՀ նախագահ ***Հ.ՈՒՐՖԱԼՅԱՆ*** Կ.Տ.

ԸՐՀ N11